ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվար 2021 թվական թիվ 21-Ա

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ ֆինանսների նախարարի 17 փետրվարի 2012 թ-ի 143-Ն հրամանի 1-ին կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ներքին աուդիտի կանոնակարգի 88-րդ կետը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման 2021թ. տարեկան ծրագրի կատարումն ապահովելու նպատակով՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ստորաբաժանումներում և ներքին աուդիտի ենթակա միավորներում 2021թ-ի առաջին եռամսյակի ընթացքում իրականացնել հետևյալ աուդիտորական առաջադրանքները.

Աուդիտի ենթակա միավորի անվանումը	Աուդիտի տեսակը	Աուդիտորական առաջադրանքի իրականացման ժամանակահատվածը
«Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. հունվար
«Ենոքավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. հունվար
«Խաշթառակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. փետրվար
«Հաղթանակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. փետրվար
«Չորաթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. փետրվար
«Բերդի թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. մարտ
«Կոթիի ԳԲԱ» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. մարտ
Գյուղատնտեսության բնապահպանության վարչություն	Համակարգի գնահատման աուդիտ	2021թ. մարտ

2. Սույն հրամանի 1-ին կետում նշված ստորաբաժանումներում՝ ներքին աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական առաջադրանքների իրականացումը վերապահել

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ (նախկինում՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ) ներքին աուդիտորներ՝ ներքին աուդիտի ծառայության աշխատանքային խմբի անդամներ՝ Հերմինե Դավթյանին և Տիգրան Հակոբյանին:

3. Աուդիտորական առաջադրանքների իրականացման գործընթացն ապահովելու նպատակով անհրաժեշտ է աջակցել ներքին աուդիտի աշխատանքային խմբի անդամներին, տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթեր և պարզաբանումներ:

4. Աուդիտորական առաջադրանքների ընթացքում թույլատրել ներքին աուդիտորներին օգտվել էլեկտրոնային տեղեկատվական համակարգերից:

ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

27.01.2021

X

27 հունվար 2021 թ.
Ք. Իջևան